

2007 թ.-ի I-եռամսյակում ՀԲՄ անդամ բանկերի գործունեության համառոտ վերլուծությունը

ՀՀ համակարգի բանկերի բնականոն և արդյունավետ գործունեության արդյունքում 2007 թ.-ի I-եռամսյակի ընթացքում գրանցվել է աճ համարյա բոլոր հիմնական ցուցանիշների գծով:

ՀԲՄ անդամ բանկերի ակտիվները 2007 թ.-ի I-եռամսյակի ընթացքում աճել են 4.42 %-ով կամ 21.9 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել մոտ 516.5 մլրդ դրամ (համակարգում ակտիվների աճը՝ 5.08 % կամ 27.7 մլրդ դրամ, իսկ ծավալը՝ 571.8 մլրդ դրամ), ընդ որում անցած տարվա նույն ժամանակամիջոցում ակտիվների աճը կազմել է 6.42 % կամ 26.4 մլրդ դրամ, իսկ ակտիվների ծավալը 2006 թ.-ի մարտի 31-ի դրությամբ կազմել է 437.3 մլրդ դրամ (համակարգում աճը՝ 6.03 % կամ 27.2 մլրդ դրամ, ծավալը՝ 478.2 մլրդ դրամ): Տեղին է նշել, որ ընթացիկ տարվա առաջին եռամսյակի ընթացքում ակտիվների աճը 4.5 մլրդ դրամով կամ 17.12 %-ով զիջում է անցած տարվա նույն ժամկետում ակտիվների աճին: Ակտիվների վերոնշյալ աճը հիմնականում պայմանավորված է վարկային ներդրումների, ինչպես նաև արժեթղթերում ներդրումների աճով:


Ընթացիկ տարվա առաջին եռամսյակում վարկային ներդրումները աճել են 6.34 %-ով կամ 14.7 մլրդ դրամով (համակարգում՝ 6.4 % կամ 16.3 մլրդ դրամ), իսկ ներդրումները արժեթղթերում՝ 4.07 %-ով կամ 3.4 մլրդ դրամով (համակարգում՝ 8.55 % կամ 7.7 մլրդ դրամ), եռամսյակի վերջում կազմելով 85.6 մլրդ դրամ (համակարգում՝ 98.2 մլրդ դրամ), ընդ որում 2006 թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում վարկային ներդրումները աճել է 3.58 %-ով կամ 6.9 մլրդ դրամով (համակարգում՝ 3.1 % կամ 6.5 մլրդ դրամ), իսկ ներդրումները արժեթղթերում՝ 10.44 %-ով կամ 6.3 մլրդ դրամով (համակարգում՝ 11.6 % կամ 7.9 մլրդ դրամ): Միաժամանակ ավելացնենք, որ ընթացիկ տարվա առաջին եռամսյակում վարկային ներդրումների աճը անցած տարվա առաջին եռամսյակի համեմուն ցուցանիշը գերազանցել է 112.41 %-ով կամ 7.8 մլրդ դրամով (համակարգում՝ 150.33 % կամ 9.8 մլրդ դրամ), իսկ արժեթղթերում ներդրումների աճը՝ զիջել է 46.88 %-ով կամ մոտ 3.0 մլրդ դրամով (համակարգում՝ 1.58 %-ով կամ 0.1 մլրդ դրամ): Վարկային ներդրումների իրական ծավալը 2007 թ.-ի մարտի 31-ի դրությամբ հասել է 246.1 մլրդ դրամի (համակարգում՝ 270.8 մլրդ դրամ), որը կազմում է ՀԲՄ բանկերի ընդհանուր ակտիվների 47.65 %-ը, ընդ որում տնտեսությանը տրված վարկերի բաժնենասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 54.08 %-ը կամ 133.1 մլրդ դրամ և այս ցուցանիշը 2007 թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում աճել է 1.18 տոկոսային կետով:

Նույն ժամանակամիջոցում ֆիզիկական անձանց տրված վարկերը աճել են 17.4 %-ով կամ 15.5 մլրդ դրամով, կազմելով 2007 թ.-ի մարտի 31-ի դրությամբ 104.6 մլրդ դրամ, ընդ որում ֆիզիկական անձանց վարկերի կառուցվածքում 6.5 %-ով կամ 4.2 մլրդ դրամով աճել է սպառողական վարկերը, իսկ 15.66 %-ով կամ 3.4 մլրդ դրամով՝ հիփոթեքային վարկերը: Եռամսյակի վերջում ընդհանուր վարկային ներդրումների 27.83%-ը կամ 68.5 մլրդ դրամը (համակարգում՝ 79.5 մլրդ դրամ) կազմել է ազգաբնակչության սպառողական կարիքների համար առևտրային բանկերի կողմից ուղղված վարկային միջոցները, որը 2006 թ.-ի մարտի 31-ի համեմատ աճել է 15.28 %-ով կամ 9.1 մլրդ դրամով (համակարգում՝ 24.02 % կամ 15.4 մլրդ դրամ): Իսկ հիփոթեքային վարկային պորտֆելը հաշվետու եռամսյակի վերջում կազմել է 24.8 մլրդ դրամ (համակարգում՝ 26.8 մլրդ դրամ) կամ վարկային ներդրումների 10.08 %-ը, աճը 2006 թ.-ի մարտի 31-ի համեմատ կազմել է 103.25 % կամ 12.6 մլրդ դրամ (համակարգում՝ 99.97 % կամ 13.4 մլրդ դրամ):

Տնտեսությանը վարկավորման ամենամեծ ծավալները ապահովել են՝ ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկուլ Բանկը՝ 21.0 մլրդ դրամ, Արդշինհիմվեստբանկը՝ 20.7 մլրդ դրամ, Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Ջայաստան բանկը՝ 19.1 մլրդ դրամ, Յունիբանկը՝ մոտ 9.3 մլրդ դրամ և ՎՏԲ Ջայաստան Բանկը՝ 9.1 մլրդ դրամ, իսկ ֆիզիկական անձանց վարկավորման գծով առաջատար դիրքերում են գտնվում՝ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Ջայաստան բանկը, որը ապահովել է՝ 17.0 մլրդ դրամ, այդ թվում հիփոթեքային վարկեր՝ 11.9 մլրդ դրամ, ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկուլ Բանկը՝ 14.4 մլրդ դրամ (1.0 մլրդ դրամ), Արդշինհիմվեստբանկը՝ 12.4 մլրդ դրամ (0), ՎՏԲ Ջայաստան բանկը՝ 10.9 մլրդ դրամ (1.5 մլրդ դրամ) և Ինելկոբանկը՝ 8.2 մլրդ դրամ (0.2 մլրդ դրամ): Ընդհանուր վարկային ներդրումներում բանկերից ֆիզիկական անձանց վարկերի ամենամեծ տեսակարար կշիռը ապահովել է Առէկսիմբանկը՝ 64.53 % կամ 5.4 մլրդ դրամ, որը հետևանք է շուկայում մեքենաների վարկավորման գծով բանկի ունեցած առաջատար դիրքով:


Պետական գանձապետական պարտատոմսերում ՋԲՄ անդամ բանկերից ամենամեծ ներդրումները ունեն Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Ջայաստան բանկը՝ 19.7 մլրդ դրամ և Արդշինհիմվեստբանկը՝ 9.4 մլրդ դրամ:

ՋԲՄ անդամ բանկերի ակտիվները և վարկային ներդրումները
2007 թ.-ի մարտի 31-ի դրությամբ



2007 թ.-ի մարտի 31-ի դրությամբ ՀԲՄ բանկերի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 398.9 մլրդ դրամ (համակարգում՝ 444.0 մլրդ դրամ), որը նախորդ տարվա նույն ժամկետի համեմատ աճել է 14.95 %-ով կամ 51.9 մլրդ դրամով (համակարգում՝ 17.14 % կամ 65.0 մլրդ դրամ): Վերոնշյալ ցուցանիշը ընթացիկ տարվա առաջին եռամսյակում աճել է 3.76 %-ով կամ 14.5 մլրդ դրամով (համակարգում՝ 4.7 % կամ 19.9 մլրդ դրամ), ընդ որում նախորդ տարվա առաջին եռամսյակում այն աճել էր 6.78 %-ով կամ 22.0 մլրդ դրամով (համակարգում՝ 6.36 % կամ 22.7 մլրդ դրամ): Ընդհանուր պարտավորությունների տարեկան կտրվածքով աճը պայմանավորված է նաև ՀԲՄ բանկերի ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային պարտավորությունների՝ 7.95 % կամ 4.2 մլրդ դրամ և 16.96 % կամ 11.5 մլրդ դրամ համապատասխան ավելացումներով (համակարգում՝ 10.85 % կամ 6.0 մլրդ դրամ, 16.9 % կամ 12.5 մլրդ դրամ), որոնք եռամսյակի վերջում կազմել են համապատասխանաբար՝ 56.5 և 79.6 մլրդ դրամ (համակարգում՝ 61.3 և 86.3 մլրդ դրամ), ընդ որում նշված ցուցանիշների տեսակարար կշիռները ընդհանուր պարտավորություններում կազմել է 14.16 և 19.95 տոկոս (համակարգում՝ 13.8 և 20.11 %): Եռամսյակային կտրվածքով ցպահանջ պարտավորությունների ամենամեծ աճ գրանցվել է Հայբիզնեսբանկի մոտ՝ 133.78 %, իսկ նվազում՝ Արցախբանկի մոտ՝ 26.74 %: Նույն ժամանակամիջոցում ժամկետային դեպոզիտների գծով ամենաշատ ավելացում արձանագրվել է Մեյլաթ բանկի կողմից՝ 248.01 %, որը եռամսյակի վերջում կազմել է 1.2 մլրդ դրամ: Այնուամենայնիվ պետք է նշել, որ ժամկետային դեպոզիտների ծավալով առաջատար բանկը Արդշինինվեսթբանկն է՝ 22.6 մլրդ դրամ, այնուհետև նրան հաջորդում են Յունիբանկը՝ 18.1 մլրդ դրամ, Կոնվերս Բանկը՝ 12.5 մլրդ դրամ, ՎՏԲ Հայաստան բանկը՝ 11.3 մլրդ դրամ և ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկը՝ 10.9 մլրդ դրամ: Թվարկված բանկերից վերոհիշյալ ցուցանիշի լավագույն աճ եռամսյակային կտրվածքով ապահովել է Կոնվերս Բանկը՝ 12.67 %: Մինևույն ժամանակ կարելի է նշել, որ 2007 թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց ավանդները (ցպահանջ և ժամկետային) ավելացել են 2.43 %-ով, կազմելով մարտի 31-ի դրությամբ 136.2 մլրդ դրամ (համակարգում աճը՝ 2.24 %, իսկ ծավալը՝ 147.6 մլրդ դրամ): Նշված ցուցանիշի առավելագույն ծավալ եռամսյակի վերջում գրանցվել է Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան բանկի կողմից, ապահովելով 29.4 մլրդ դրամ: 2007 թ.-ի մարտի 31-ի դրությամբ ֆիզիկական անձանց ավանդների տեսակարար կշիռը ընդհանուր պարտավորություններում կազմել է 34.14 տոկոս (համակարգում՝ 33.24 %):

ՀԲՄ անդամ բանկերի պարտավորությունները և ֆիզ. անձանց ավանդները (ցպահանջ և ժամկետային) 2007 թ.-ի մարտի 31-ի դրությամբ



ՀԲՄ բանկերի ընդհանուր կապիտալը հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 6.74 %-ով, 2007 թ.-ի մարտի 31-ին կազմելով 117.6 մլրդ դրամ (համակարգում՝ 6.45 % և 127.8 մլրդ դրամ), որը հիմնականում ապահովվել է բանկերի կողմից կուտակված շահույթի, ինչպես նաև կանոնադրական հիմնադրամի ավելացման հաշվին: Վերոհիշյալ բանկերի կուտակված շահույթը առաջին եռամսյակի ընթացքում աճել է 18.91 տոկոսով, եռամսյակի վերջում կազմելով մոտ 29.0 մլրդ դրամ (համակարգում՝ աճը 17.84 %, իսկ ծավալը 33.5 մլրդ դրամ), ընդ որում կուտակված շահույթի տեսակարար կշիռը ընդհանուր կապիտալում կազմել է 24.66 %, որը տարվա սկզբի նույն ցուցանիշը գերազանցվել է 2.27 տոկոսային կետով: Ընդհանուր կապիտալի մյուս կարևոր բաղկացուցիչ մասը՝ կանոնադրական հիմնադրամը, եռամսյակի ընթացքում աճել է 3.74 %-ով, կազմելով 77.6 մլրդ դրամ (համակարգում՝ 3.5 % և 82.9 մլրդ դրամ), կամ ընդհանուր կապիտալի 65.99 %-ը, նախորդ տարվա համեմատ գրանցվել է տեսակարար կշռի նվազում 1.91 տոկոսային կետով: Հաշվետու եռամսյակում ընդհանուր և կանոնադրի կապիտալների աճերը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ աճել են համապատասխանաբար 1.68 և 3.29 տոկոսային կետով կամ 3.1 և 2.55 մլրդ դրամով:


Կուտակված շահույթի ցուցանիշով առաջատարը Կոնվերս բանկն է՝ 5.8 մլրդ դրամ գուարով, բանկը 2007 թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում ապահովել է 4.99 %-ի աճ: Նրան անմիջապես հաջորդում են՝ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան բանկը՝ 5.4 մլրդ դրամ (աճը 19.37 %), Անելիք բանկը՝ 4.43 մլրդ դրամ (աճը 1.4 %) և Արդշինինվեստբանկը՝ 3.0 մլրդ դրամ (աճը 44.05 %): Անցած եռամսյակի կտրվածքով կուտակված շահույթի նշանակալից աճ ապահովել է Յունիբանկը՝ 67.1 տոկոս՝ կուտակված շահույթի մեծությամբ հասցնելով 1.35 մլրդ դրամի:

ՀԲՄ բանկերի թվում հաշվետու եռամսյակի ընթացքում կանոնադրական հիմնադրամի համալրման գծով աճ է ապահովել Յունիբանկը՝ 100.0 տոկոս, բանկի կանոնադրական հիմնադրամը մարտի 31-ի դրությամբ կազմել է մոտ 5.6 մլրդ դրամ:

2007 թ.-ի մարտի 31-ի դրությամբ ըստ ընդհանուր կապիտալի մեծության առաջին հնգյակը կազմել են՝ ԱԿԲ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկը՝ 18.8 մլրդ դրամ, Արդշինինվեստբանկը՝ 12.0 մլրդ դրամ, Կոնվերս բանկը՝ 9.9 մլրդ դրամ, ՎՏԲ Հայաստան Բանկը՝ 9.5 մլրդ դրամ և Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան բանկը՝ 8.3 մլրդ դրամ:

ՀԲՄ անդամ բանկերի ընդհանուր կապիտալը, կանոնադրական հիմնադրամը և կուտակված շահույթը 2007 թ.-ի մարտի 31-ի դրությամբ

մլրդ դրամ



ՀԲՄ բանկերի կողմից հաշվետու եռամսյակի ընթացքում ապահովվել է 4.4 մլրդ դրամ մաքուր շահույթ (համակարգում՝ 4.8 մլրդ դրամ), որը նախորդ տարվա նույն եռամսյակի համանուն ցուցանիշը գերազանցել է 0.6 մլրդ դրամով կամ 14.91 %-ով: 2007 թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում վերոհիշյալ բանկերի ընդհանուր եկամուտները նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ աճել են 20.55 %-ով կամ 3.8 մլրդ դրամով, իսկ ծախսերը՝ 22.13 %-ով կամ 3.0 մլրդ դրամով, եռամսյակի վերջում կազմելով համապատասխանաբար 22.1 և 16.6 մլրդ դրամ, արդյունքում ապահովվել է 5.4 մլրդ դրամ հաշվեկշռային շահույթ, որը նախորդ տարվա առաջին եռամսյակի համանուն ցուցանիշից ավելի է 15.97 %-ով կամ 0.7 մլրդ դրամով: Հաշվետու եռամսյակում ստացված ընդհանուր եկամուտների և կատարված ընդհանուր ծախսերի գծով առաջատարը Արդշինհիմվեստբանկն է համապատասխանաբար՝ 4.45 և 3.27 մլրդ դրամ գումարներով, իսկ հաշվեկշռային շահույթի ամենամեծ ծավալը նույնպես ապահովել է Արդշինհիմվեստբանկը՝ 1.18 մլրդ դրամ: Ընդհանուր առմամբ ՀԲՄ բանկերը, առանց բացառության, 2007 թ.-ի առաջին եռամսյակը ավարտել են շահույթով: Ստացված մաքուր շահույթի ծավալով առաջին տեղում է Արդշինհիմվեստբանկը՝ 0.95 մլրդ դրամ, այնուհետև՝ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան բանկը՝ 0.88 մլրդ դրամ, ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը՝ 0.61 մլրդ դրամ և Յունիբանկը՝ 0.54 մլրդ դրամ:

2007 թ.-ի առաջին եռամսյակի արդյունքներով ՀԲՄ բանկերի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը, մարտի 31-ի դրությամբ կազմել է 3.77 տոկոս, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը, նույն ժամկետի դրությամբ կազմել է 0.86 տոկոս: Վերը նշված առաջին ցուցանիշի (ROE) ամենաբարձր արդյունքը եռամսյակի ընթացքում ապահովել է Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան բանկը՝ 10.55 տոկոս, իսկ երկրորդ ցուցանիշինը (ROA)՝ Ջարգացման Հայկական Բանկը՝ 1.84 տոկոս:

Վերլուծական նյութում արտացոլված ցուցանիշները պարունակում են նաև բանկերի դուստր կառուցվածքների տվյալները:

ՀԲՄ անդամ բանկերի ամփոփ ցուցանիշները

